ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԵԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԸ

(ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ)

(Շար. բազմ. 1955, թ. 6-7, էջ 129)

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՇՔԵԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԻՆ

Համառօտ նկարագրութիւն մը Բառարանին հետաքրքրական պիտի ըլլայ։ Զայն աչքով տեսած ըլլալու բախտը ունեցած չենք։ Օգտուելով Հ. Յ. Տաշեանի տուած տեղեկութիւններէն (Մայր ցուցակ Հայերէն Ձեռագրաց. հտ. Ա. գիրք Բ. էջ 22) ջանացինք հոս ամփոփել նկարագրականը Ռոշքեանի Բառարանին։

Բառարանը կազմուած է երկու մասերէ Ա.) Առաջին մասը, որ ընդարձակագոյնն է, հայերէնէ-լատիներէն է։ Հեղինակը իր մեծագոյն ճիգը թափած է այս մասին և իր զուրգուրանքին աւելի առարկայ ըրած է այս մասը, ինչպէս կը կարդանք իր նամակներուն մէջ։ Կը բաղկանայ 638 թուղթերէ, վերջին թուղթը միայն պարապ է կոնակի կողմը։ Էջերու գումարը հետևարար՝ է 1275։ Երկսիւն է, տողերը 64-66։ Մեծութիւնը թուղթին՝ է 31,5×20,5, անոզորկ և բարակ թուղթի վրայ գրուած, Ռոշքեանին իսկ ձեռքով։ Հատորը կաշեպատ է և քայքայուած։ Զունի մագաղաթեայ պահպանակ։ Շատ գործածուած կ'երեւի, և այդ իսկ պատճառով լուսանցքները տեղ տեղ սեւցած և ֆնասուած։ Նօտրգրով գրուած է, կանոնաւոր և գիւրընթեռնելի։ Զունի խորագիրներ։ Իւրաքանչիւր նոր տառին առաջին բառը գլխագրով կը սկսի։

Բ) Երկրորդ մասը կ'ամփոփէ բառեր լատիներէնէ-հայերէն։ Այս մասը աւելի համառօտ է և ունի 336 էջ միայն, նոյնքան թուով տողերու իւրաքանչիւր էջին մէջ, և նոյն գրերով և միշտ հեղինակէն գրուած։

Հատորը չունի յիշատակարան։ Բ. մասին վերջը միայն կը գտնուի հեղինակէն իսկ գրուած սա խօսքը. « Nemo de annis sed de meritis suis quisque æstimandus est ». « Ոչ ոք ի տարեաց (այսպէս է. ըլլալու էր ի տարեաց), բայց յարդեանց իւրեանց ամենայն ոք յարգելի է »։

Բ. մասին էջ 334-ին վրայ գրուած է ուրիշէ մը Dominof, որ հաւանաբար եթէ յատուկ անուն է, ըլլալու է սատացողը ձեռագրին. այդ անունը հոն քանի մը անգամ կրկնուած է, իբր յայտանիշ սեփականութեան։

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ՄԻԹԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ ՀԱՅԿԱԶԵԱՆԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅԿԱԶԵԱՆԻՆ ՀԵՏ

Համեմատական պատկեր մը Ռոշքեանի բառարանին և Մխիթար Աբբահօր Հայկազեանին և Երից վարդապետաց Նոր Հայկազեանին հետ՝ մերձաւոր զաղափար մը կրնայ տալ Ստեփանոս Լեհացիին կատարած ճիգերուն, արժէքին և նաև իր եղանակին՝ բառերու բացատրութեան և բերած վկայութիւններուն։

Քանի մը սիւներու միայն համեմատութիւնը չի կրնար, ի հարկէ, տալ մեզի լիակատար զաղափար իր բերած նորութիւններուն և իր թերութիւններուն, սակայն բաւական կը համարինք այդքանը, շատ չերկարելու համար մեր ներկայ գրութիւնը։